

ՄԿԱՆԱՅԻՆ ԴԻՍՏՐՈՖԻԱՆԵՐԻ (ՄԻՈԴԻՍՏՐՈՖԻԱՆԵՐ) ՎԱՂ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ենգիբարյան Ա.Ա., Մաթևոսյան Հ.Շ., Կրասնիկով Ն.Ֆ., Հովսեփյան Մ.Է.

*Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կենսաբանության
ամբիոն, Երևան, Հայաստան*

Գրականության տվյալների համառոտ վերլուծության հիման վրա տրված է մկանային դիստրոֆիաների (միոդիստրոֆիաների) տարբեր նոզոլիազան ձևերի ժամանակ կմախքային մկանաթելերում տեղի ունեցող բիոքիմիական, մորֆոլոգիական և այլ բնույթի փոփոխությունների պաթոգենեզը, մուտացիաների բնույթը և հետևանքները, ախտաբանական գեների պենետրացիայի հավանականությունը և դիֆերենցիալ դիագնոստիկայի ժամանակակից մեթոդների արդյունավետությունը:

Քանի որ մկանային դիստրոֆիաները ունեն պրոգրեսիվող ընթացք և հատկապես Դյուշենի, Բեկկերի հիվանդությունները բավականին հաճախ են հանդիպում ու հասցնում են հաշմանդամության ու մահվան:

Ուստի արձանագրվել է, որ միոդիստրոֆիաների վաղ դիֆերենցիալ ախտորոշումը շատ կարևոր է հիվանդների սոցիալական և հոգեբանական ռեաբիլիտացիայի տեսակետից: Սակայն, գոյություն ունեցող դիագնոստիկ մեթոդները ոչ միշտ են արդյունավետ: Հետևապես կարևոր է վաղ ախտորոշման ավելի արդյունավետ մեթոդի մշակումը և կլինիկական ներդրումը: Ճիշտ է, գոյություն ունի մկանային բիոպտատի մորֆոլոգիական հետազոտության եղանակ, սակայն այսօրվա վիճակով այն ախտորոշման առումով ինֆորմատիվ չէ, քանի որ դիստրոֆիկ փոփոխությունների բնույթը ըստ եռության չունի սպեցիֆիկ բնույթ: Ելնելով վերոհիշյալից, արվում է առաջարկություն. տոհմաբանական վերլուծությունից հետո ռիսկի խմբերում գտնվող անհատների մոտ դիագնոստիկ նպատակով մկանային բիոպտատներում կատարել առաջնային փոփոխություններից ռեպարատիվ միոգենեզը ապահովող միոսատելիտային բջիջների միոբլաստների և միոտուբերի քանակական ու որակակ անուսումնասիրություն: Այն կարող է ինֆորմատիվ լինել մկանային դիստրոֆիաների ժամանակ ամենավաղ փոփոխությունների զարգացման ուղղության, բնույթի և պրոգնոզի տեսակետից: